Քաղաքականության համառոտագիր

Փոքր հիդրո-էլեկտրոկայանների (ՓՀԷԿ) սոցիալ էկոլոգիական ազդեցության վերլուծություն
Հեղինակ՝ Վիկտորյա Բուրնազյան

Փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) զարգացման սխեմայի իրականացմանը զուգահեռ Հայաստանում առաջացել են ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի, կենսաբազմազանության, հատուկ պահպանվող տարածքների, լանդշաֆտների, բնակչության սոցիալական սոցիալական վիճակի եւ կյանքի որակի հետ կապված խնդիրներ: Այս ոլորտի վերաբերյալ կան տարբեր ուսումնասիրություններ, որոնք ներկայացնում են ՓՀԷԿ-երի զարգացման հեռանկարները, ֆինանսավորման աղբյուրները, ջրօգտագործման եւ հողօգտագործման իրավական ասպեկտները, էներգետիկ անվտանգությանն ուղղված փոքր հիդրոէներգետիկայի զարգացումը, էկոլոգիական ռիսկերը՝ կապված կեսաբազմազանության կորստի, գետային էկոհամարգերի վիճակի վատթարացման հետ եւ այլն:
Այս հետազոտության նպատակն է ընդհանրականից մասնավորեցնել ՓՀԷԿ-երի խնդիրները եւ ցույց տալ առկա խնդիրները ստույգ դեպքերի ուսումնասիրման հիման վրա: Այսպիսով, հետազոտության մեջ ներառված են՝

- 25 ՓՀԷԿ-ի նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերլուծությունը
- 47 գետերի էկոլոգիական ծանրաբեռնվածությունը 100 ՓՀԷԿ-երով
- ՓՀԷԿ-երի համապատասխանությունը «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիային, ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիային (Օրհուսի կոնվենցիա), ՀՀ ջրային եւ անտառային օրենսգրքերին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքներին
- ՓՀԷԿ-երի ազդեցության ենթակա 12 համայնքներում անցկացված սոցիալական հարցումների արդյունքները
- ՓՀԷԿ-երի ոլորտում պետական մարմինների գործունեության թափանցիկության եւ հաշվետվողականության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները
- ՓՀԷԿ-երի համապատասխանությունը միջազգային ֆինանսական ինստիտուտների սոցիալական եւ էկոլոգիական քաղաքականությանը:

Հիմնական արդյունքներ:

- Նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականների (ՇՄԱԳ) վերլուծությունը ցույց տվեց, որ նախագծերը չեն համապատասխանում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաեւ

խախտում են բնապահպանական օրենսդրությունը՝ ՀՀ ջրային եւ անտառային օրենսգրքերը, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքները:

- ՓՀԷԿ-երի շահագործման հետեւանքով ուսումնասիրված 47 գետերից 28 գետերի ծանրաբեռնվածությունը նորմայի սահմանում է, 16-ը ճգնաժամային, 3-ը աղետալի վիճակում են:
- Հասարակական լսումներն իմիտացիոն բնույթ են կրում, որոշումներ կայացնելիս հաշվի չեն առնվում համայնքների բնակչության կարծիքները: Հասարակական լսումներն անցկացվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի եւ Օրհուսի կոնվենցիայի դրույթների խախտմամբ:
- ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը ոչ թափանցիկ է աշխատում. մերժում է տրամադրել հասարակական լսումների արձանագրությունները, կարծիքներ եւ բնապահպանական փորձաքննական եզրակացություններ:
- Միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ երկխոսությունը ցույց տվեց, որ նրանք շահագրգռված են վարկի 100% մարմամբ, այլ ոչ թե շրջակա միջավայրի պահպանությամբ եւ սոցիալական վիճակի բարելավմամբ:

Առաջարկություններ

1. Փոխել ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 927-Ն որոշումը էկոլոգիական թողքի վերաբերյալ (որպեսզի էկոլոգիական թողքը 50 տոկոսից պակաս չլինի), որպեսզի գետային էկոհամակարգը պահպանվի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբեր 8-ի «Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու վերաբերյալ առաջարկության մասին» 1300–Ա որոշումը, որով ՓՀԷԿ-երի հզորության չափն ավելացել է 10-ից մինչև 30 Մվտ:
3. Որոշել ՓՀԷԿ-երի համար արգելված գոտիները, որոնք ընդգրկում են հատուկ պահպանվող տարածքներ, անտառային տարածքներ, սողանքային գոտիներ, ջրաբանական խոցելի տարածքներ:
4. Արգելել նոր ՓՀԷԿ-երի կառուցումը եւ չերկարացնել կառուցված ՓՀԷԿ-երի լիցենզիաներն այն գետերի վրա, որոնք գտնվում են ճգնաժամային եւ աղետալի վիճակում գետի գերշահագործման պատճառով:
5. Սահմանել հստակ կարգ, որը թույլ կտա հաշվի առնել ազդակիր համայնքի բնակչության կարծիքը ՓՀԷԿ-ի կառուցման վերաբերյալ:
6. Միջազգային ֆինանսական ինստիտուտները մյուս շահագրգիռ կողմերի՝ ՀՀ բնապահպանության նախարարության, Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ միասին պետք է պատասխանատվություն կրեն ՓՀԷԿ-երի գործունեության հետեւանքով առաջացած բացասական էկոլոգիական, սոցիալական հետեւանքների համար եւ ազգային ու միջազգային օրենսդրության խախտումների համար:
7. Ազատել Սեւանա լիճ թափվող գետերը փոքր ՀԷԿ-երից, արգելել այդ գետերի վրա նոր ՓՀԷԿ-երի կառուցումը, ապամոնտաժել անօրինական ՓՀԷԿ-երը եւ չերկարացնել գործող ՓՀԷԿ-երի լիցենզիաները:
8. Հրապարակային դարձնել ՓՀԷԿ-երին վերաբերող բոլոր պաշտոնական փաստաթղթերը՝

նախագիծ, հասարակական լսումների արձանագրություն, բնապահպանական փորձաքննական եզրակացություն:

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան ԲՀՀ –Հայաստան կազմակերպության աջակցությամբ ԲՀՀ- Հայաստանի՝ հանրային քաղաքականության հետազոտություն նախաձեռնության թիվ 18597 դրամաշնորհի շրջանակներում: Հետազոտության մեջ
ներկայացված գաղափարները, մտքերը և փաստարկները ներկայացնում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել ԲՀՀ-Հայաստան-ի կարծիքի հետ:

Հետազոտության ամբողջական տեքստը տես հետևյալ հղումով՝

Սույն հետազոտոտության վերաբերյալ Ձեր հարցերը կարող եք հղել Վիկտորյա Բուրնազյանին՝ էլ. փոստ՝ vicaburnazyan@gmail.com